Արձանագրություն N 4

ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռավանի համայնքապետարանի կարիքների համար «ՀՀԿՄՔՀ-ԳՀԱՇՁԲ-20/10» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

31 օգոստոսի 2020թ.
Ժամը՝ 11:00

գ. Քանաքեռավան

Հանձնաժողովի նախագահ՝

- Ա.Առաքելյան - ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռավանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

Հանձնաժողովի անդամներ՝

- Ս. Հարությունյան - ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռավանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ
- Ն. Սարիբեկյան - ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռավանի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ

Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Հովհաննիսյան

Օրակարգ
Հայտերի գնահատման նիստի մասին

1. Գնման ընթացակարգի գործընթացի մասին

1.1 Սույն թվականի օգոստոսի 31-ի գնահատող հանձնաժողովի նիստով ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռավանի համայնքապետարանի կողմից կազմակերպված ՀՀԿՄՔՀ-ԳՀԱՇՁԲ-20/10 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից էր ճանաչվել «ԱՆՆԱՐ» ՍՊԸ-ն, որին սահմանված ժամկետներում ծանուցվել է պայմանագրի նախագիծը և առաջարկվել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագիրը, պայմանագրի և որակավորման ապահովումները:

1.2 «ԱՆՆԱՐ» ՍՊԸ-ն 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ներկայացրել իր կողմից ստորագրված և կնքված պայմանագիրը:

2. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

2.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. Թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 45-րդ կետը, նախաձեռնել գործընթաց՝ «ԱՆՆԱՐ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի բ/ ենթակետի:

2.3 ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռավանի համայնքապետարանի կողմից կազմակերպված ՀՀԿՄՔՀ-ԳՀԱՇՁԲ-20/10 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «ԵՂՎԱՐԴՇԻՆ» ՍՊԸ-ին:

2.3 ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռավանի համայնքապետարանի կողմից կազմակերպված «ՀՀԿՄՔՀ-ԳՀԱՇՁԲ-20/10 » ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում 5 օրացուցային օր:

2.4 Պայմանագիր կնքելու նպատակով ընտրված մասնակցին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում կնքվելիք պայմանագրի (տասը) տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ իր ներկայացրած գնային առաջարկի չափով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա. Առաքելյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ս. Հարությունյան

_____ Ն. Սարիբեկյան

_____

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Տ. Հովհաննիսյան